

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐՔՆ

Ալէքսանդր Քալանթարի Թաղման կարգագիր Մամնաժողովը, համաձայն ցանկութեան «Մշակի» խմբագրութեան, որոցել է առաջարկել հանգուցեալի յիշատակը յարդել ցանկացող բոլոր հաստատութիւններին և անձանց՝ հրաժարվել դագաղի վրա պատկ զնելու դիտաւորութիւնից և պատկի համար յատկացվելի գումարը յանձնել Կարգագիր Մամնաժողովն, որ կայացրել է որոշումն յաւերժացնել հանգուցեալի յիշատակը մի հանրօգուտ ակտով—ֆօնդով—գործադրելու այդ նպատակին:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԸ ՀԱՄԱՀԳԱՅԻՆ
ՊԷՏՔ Է ԼԻՆԻ

Համագգային Յօրեկեանի տօնախըմբութիւնից յետոյ, հոկտ. 13-ին, երեկոյեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաւիրեց իր մօս մի քանի անձանց խորհրդակցութեան՝ լսելու կարծիքները, թէ դպրոցական ֆօնդին, որ սահմանված է յաւերժացնելու յօրեկեանը, ի՞նչ բնաւորութիւն տալ. արդեօք նա համագգային պէտք է լինի, այսինքն այդ ֆօնդից պէտք է օգտվեն հայութեան բոլոր հաստուածները թէ՝ միայն ուսւահայերը։

Ողբացեալ Ալ. Քալանթարը և ես ուժգնորէն պաշտպանեցինք այն կարծիքը, թէ դպրոցական ֆօնդը համագգային պէտք է լինի, այն է՝ ֆօնդի եկամուտները պէտք է գործադրվեն հայոց ազգային-եկեղեցական դպրոցների բացման, պահպանութեան և բարգաւաճման վրա թէ Ռուսաստանում, թէ Թիւրքիայում և թէ Պարսկաստանում։

Խօսք խնդրելով վեհափառ Կաթողիկոսից, ես յայտնեցի, որ էջմիածնի կապը Թիւրքիայի հայութեան հետ մինչեւ այսօր արտայատվում է նրանով, որ էջմիածնը ձեռնադրում է եպիսկոպոսներ և ուղարկում միւռոն, ուրիշ աւելի զօրեղ և բարոյական կապեր շը կան. մինչ եթէ էջմիածնը կարողա-

նայ նպաստել և ազգային կրթութեան գործին այդ երկում և Պարսկաստանում, բարոյական կապը նրա և հայութեան այդ երկու հատուածների միջև աւելի զօրեղ կը լինի.

Իմ այս կարծիքը ուժգնապէս պաշտանեց Ալ. Քալանթար և բերեց նաև այլ պատճառաբանութիւններ, ոյժ տուող այդ կարծիքին։

Եղան առարկողներ, թէ էջմիածնը կարող է, ունենալով ձեռքին դրամական ոյժ, միջամտաթիւն գործել թիւրքահայոց և պարսկահայոց կրթական գործի մէջ Սակայն այդ առարկութիւնը ներանով, որ էջմիածնը ինքնուրոյն կամ անկախօրէն չէ գործելու, այլ նա միայն ամեն տարի նախահաշուով յատկացված գումարը Թիւրքիայի և Պարսկաստանի համար յանձնելու է այդ երկիրների ձեռնասապգային վարչութիւններին։

Ապօս Ալէքսանդր Քալանթար ջերմօրէն պաշտպանեց այն կարծիքը, որ դպրոցական ֆօնդի կազմակերպութեան և գործադրութեան համար կազմվելի մարմինը կամ յանձնաժողովով պէտք է բարդացած լինի հայ ժողովրդի կողմից ընտրված անձերից և էջմիածնի ներկայացուցիչներից։ Աշխարհական ներկայացուցիչները չեն պէտք է անպատճառ էջմիածնում ապրողներ լինեն, այլ նրանք իւրաքանչիւր տարի պարբերաբար մի քանի անգամ կը գնն էջմիածնի և կը կայացնեն հարկաւոր որոշումները, իսկ գործադրութիւնը կը թողնեն էջմիածնում գտընչող բիւրոյին, ընտրված յանձնաժողովի կողմից։

Դպրոցական ֆօնդը համագգային գարձնելու առաջարկը կունենայ և այն հետևանքը, որ թիւրքահայերը, պարսկահայերը և առ հաստրակ արտասահմանեան հայերն ևս կը մասնակցեն այդ ֆօնդին և մենք կունենանք մի ընդհանուր համագգային ֆօնդ մեր դպրոցական գործի համար։

Արժէր որ մեր մամուլը և հասարակութիւնը լրջօրէն զբաղվէր այդ հարցով։

Հ. Առաքելեան